

ՄԱՍՆԱՎՈՐ ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՉՈՐՍ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԻ ՏՎՉՈՒԹՅՈՒՆ ՕՇԱԿԱՆՈՒՄ

Փետրվարի 9-ին, շաբաթ օրը, Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում տեղի ունեցավ մասնավոր վարդապետական իշխանության չորս աստիճանների տվչություն: Սյունյաց թեմի առաջնորդ Տ. Ասողիկ եպիսկոպոս Արիստակեսյանը, համաձայն Ձեռնադրության Մաշտոցի, վարդապետական չորս աստիճաններ շնորհեց Մայր Աթոռի միաբաններ Տ. Աբել աբեղա Օղլուգյանին և Տ. Ծնորհք աբեղա Բաղդասարյանին: Երկու երիտասարդ հոգևորականներ ուխտի եկան Մեծն Վարդապետի և ուսուցչապետի շիրիմին՝ նորոգվելու համար նրա շնորհներով:

Ձեռնադրության Մաշտոցը վկայում է, որ մասնավոր և ծայրագույն վարդապետական աստիճանների տվչության արարողակարգը սահմանել է 15-րդ դարի հայ եռամեծար վարդապետ և ուսուցչապետ Ս. Գրիգոր Տաթևացին: Ըստ Հայաստանյայց Եկեղեցվո սրբազան ավանդության, մասնավոր վարդապետական աստիճան ստացած հոգևորականն է, որ իրավունք ունի քարոզելու և ուսուցանելու: Արարողության ընթացքին կարդացվում են չորս Ավետարաններ:

Հավարտ արարողության Տ. Ասողիկ եպիսկոպոս Արիստակեսյանը շնորհավորանքի խոսք հղեց ընծայյալներին:

Այնուհետև Հայր Աբել և Հայր Ծնորհք վարդապետները երկրպագեցին Մեծն Վարդապետի՝ Ս. Մեսրոպ Մաշտոցի գերեզմանին և վերստին նորոգեցին իրենց ուխտը:

Տ. Աբել և Տ. Ծնորհք Վարդապետները սովորել և ավարտել են Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանը: Այնուհետև Վեհափառ Հայրապետի տնօրինությամբ իրենց ուսումը շարունակել են՝ առաջինը Վիեննայի և երկրորդը՝ Լոնդոնի համալսարաններում: Նրանք Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նորահաստատ Քրիստոնեական Քարոզչության Կենտրոնի անդամ են և կոչված են ծառայելու Մայր Հայրենիքում քրիստոնեական ուսուցումի կարևոր գործին՝ համաձայն մեր Եկեղեցվո ճշմարիտ վարդապետության:

ԴԻՎԱՆ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ